և խայտառակեսցի ամուսնացեալ կնոջ և դստերկոյս մահու մեռցի։

ԳԼՈՒԽ ՆԿԶ.

Ամենայն ոք զի գողանասցէ ինչ արժանոյ իբր մի հարիւր դրամ երծաթոյ մահու մեռցի։

ԳԼՈՒԽ ՆԿԷ.

Ամենայն լրտես 'ի թշնամեաց 'ի ժամանակ պատերազմի ըմբռնեցեալ խկոյն մեռցի։

ԳԼՈՒԽ ՆԿԸ.

Ամենայն դեղակուր ընդ ումեմն արասցէ և նովաւ հանիցէ նմայ 'ի կենաց եթէ գաղտնի եթէ խաբէութեամբ մահու մեռցի։

ԳԼՈՒԽ ՆԿԹ.

Աւազակ ըմբռնեցեալ հաստատելով 'ի վերայ նորա գործ աւազակութեան որում աւազակեալ լինի ինչ իբր արժանոյ 100 դահեկան երծաթի մահու մեռցի։

ԳԼՈՒԽ ՆՀ.

Ով ոք որ համարձակեսցի և հարկանեսցէ քահանայի Օծեալ Տեառն հրացեալ երկաթիւ կիզեսցի ձեռ նորայ, այլ եթէ քահանայ ոք բարկացեալ հարկանիցէ ումեք իշխանի և կամ հա-